ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ՝ 2020-2022ԹԹ. ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԵՎ 2020Թ. ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայտի ուսումնասիրության և ս.թ. հունիսի 14-ին ՀՀ քննչական կոմիտեում (այսուհետ՝ Կոմիտե) տեղի ունեցած հանրային քննարկումների արդյունքում ներկայացնում ենք Կոմիտեի ներկայացրած՝ 2020-2022թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի և 2020թ. բյուջեի նախագծերի (այսուհետ՝ Հայտերի) վերաբերյալ հետևյալ դիտողություններն ու առաջարկությունները:

Նախ նշենք, որ Կոմիտեն իր պաշտոնական համացանցային կայքէջում չի տեղադրել իր կողմից ներկայացվող 2020-2022թթ, միջնաժամկետ ծախսային ծրագրի և 2020թ. բյուջեի ֆինանսավորման հայտը, որը հանդիսանում է հրապարակայնության սկզբունքի խախտում: Հայտի բացակայության պարագայում քաղաքացիական հասարակության կազմակերպությունները հնարավորություն չեն ստանում ծանոթանալ և առաջարկություններ ներկայացնել միջնաժամկետ ծախսային ծրագրերի վերաբերյալ: Ուստի միջնաժամկետ ծախսերի վերաբերյալ դիտողությունները և առաջարկությունները կներկայացվեն՝ հիմք ընդունելով Կոմիտեի պաշտոնական կայքէջում ներկայացված մասնակի տեղեկությունը:[1]

1. **Ռազմավարական պլանավորում և ծրագրավորում**

   Թեև վերոնշյալ հայտի բացակայության պարագայում անհնար է որոշել, թե հայտը ինչպիսի իրավական փաստաթղթերի հիման վրա է կազմվել, այնուամենայնիվ հիմք ենք ընդունում հանրային քննարկման ժամանակ հնչեցված դիտարկումները և նկատառումները:

   ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 1.1: Առաջարկում ենք Կոմիտեի ռազմավարական նպատակները և թիրախները սահմանելիս առաջնորդվել՝

   - Կառավարության ծրագրով[2] և Կառավարության 2019թ. մայիսի 16-ի N 650-Լ որոշմամբ հաստատված Կառավարության 2019-2023թթ. գործունեության միջոցառումների ծրագրով: Հիշյալ որոշման N 1 հավելվածով հաստատվել է նաև ՀՀ կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկը (այսուհետ՝ Ցանկ), որով Կոմիտեն սահմանված ժամանակահատվածում պետք է իրականացնի միջոցառումներ՝ ուղղված մարդու իրավունքների պաշտպանությանը, կոռուպցիայի դեմ պայքարին, էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի (e-justice.am) մշակմանը և ներդրմանը, հարցաքննությունների տեսաձայնագրման ինստիտուտի ներդրմանը[3]:

---

[1] Տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://investigative.am/news/view/mijnajamket-caxseri-cragir.html :

[2] Տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.gov.am/files/docs/3133.pdf :

[3] Տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.gov.am/files/docs/3347.pdf?fbclid=IwAR2jWpsn5Qxi5pOBQN0Qh2i0TwCBijS7C9NMEG38_fbA5AADHXixEDDY-cY

- Հայաստան-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի հոդված 1-ի (e) նպատակով, 4-րդ, 12-րդ, 16-րդ հոդվածներով[4], և ՀՀ վարչապետի 2019թ. հունիսի 1-ի N 666-Լ որոշմամբ, որի հավելվածի ճանապարհային քարտեզի «Արդարադատություն, ազատություն և անվտանգություն» վերտառությամբ 3-րդ մասով[5]:

- ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայով, մասնավորապես՝ 5-րդ գլխով, որը վերաբերվում է ակտիվների վերադարձին:[6]

2. Միջոցառումներ և արդյունքային ցուցանիշներ

Հայտերի ծրագրերում սահմանված միջոցառումների համար նախատեսված չեն արդյունքային (քանակական և որակական) ցուցանիշներ, որոնք պետք է բխեն և համապատասխանեն ծրագրերում սահմանված թիրախներին և նպատակներին: Կոմիտեի պաշտոնական կայքէջում զետեղված Պարտադիր և հայեցողական ծախսեր հավելվածից տեղեկանում ենք, որ Կոմիտեն իր ֆինանսական միջոցները նախատեսում է ծախսել 4 ուղղություններով, որոնք են քրեական գործերով վարույթի իրականացումը, վերապատրաստման և պատրաստման կազմակերպումը, Կոմիտեի պահուստային ֆոնդին հատկացումներ տրամդրելը և մասնագիտական պատրաստում անցնող ունկնդիրներին կրթաթոշակ հատկացնելը:[7] Մինչդեռ պահուստային ֆոնդի գոյացումը կարգավորվում է օրենսդրությամբ սահմանված կարգով՝ կազմելով պետական մարմնի համար հատկացված տարեկան բյուջեի 2 տոկոսը: Այսինքն, այն ֆիքսված ֆինանսական միջոց է, ոչ թե ծրագրերով սահմանված միջոցառում, որով նա հասնում է իր ռազմավարական նպատակին: Ծրագրերով սահմանված միջոցառումները պետք է լինեն հստակ և իրականանալի: Իսկ եթե կան կանխատեսումներ, որ տվյալ միջոցառման համար հետագայում կարող են առաջանալ չկանխատեսված ծախսեր, ապա անհրաժեշտ է նշել և հիմնավորել պահուստային ֆոնդից միջոցներ հատկացնելիս Կոմիտեի ծախսային գերակայությունները:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 2.1: Առաջարկում ենք ներդնել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության (ներքին) մեկ միասնական համակարգ, որով քննիչների աշխատանքի որակը և արագությունը էականորեն կբարելավվի:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 2.2: Առաջարկում ենք քննչական բաժիններում իրականացնել համալիր կարիքների գնահատում, վեր հանել տեխնիկական հագեցվածության համար անհրաժեշտ միջոցները, ստեղծել քննիչների բնականոն գործունեությունը ապահովող կենսական աշխատանքային (սենյակային) պայմաններ, որտեղ պատշաճ կարգով կկատարվեն քննչական գործողություններ: Այսօր մի շարք քննչական բաժիններում

---

[4] Տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.mfa.am/filemanager/eu/cepa.pdf :https://www.mfa.am/filemanager/eu/cepa.pdf :

[5] Տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.e-gov.am/u_files/file/decrees/varch/2019/19_666_1.pdf :

[6] Տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.unodc.org/documents/brussels/UN_Convention_Against_Corruption.pdf

[7] Տես սույն հմամբ՝ http://investigative.am/images/2019/byuje/Partadir_ev_hayecoxakan_caxser.pdfhttp://investigative.am/images/2019/byuje/Partadir_ev_hayecoxakan_caxser.pdf

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 2.3: Առաջարկում ենք կեղծ փողերի բացահայտման շրջանակներում փորձաքննությունները պատվիրել ՀՀ կենտրոնական բանկի միջոցով, քանի որ վերջիններս տրամադրում են արդյունքներն անվճար և ավելի սեղմ ժամկետներում: Նախ բյուջեի համար սա խնայողություն է, երկրորդը՝ ԿԲ-ին վերապահված են վերահսկողական մեխանիզմներ կեղծ փողերի շրջանառության գործընթացում: Դեռ ավելին, ԿԲ-ն ունի տեղեկատվական ներքին մեծ ռեսուրսներ և մասնագիտացված կառույց է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարում:

3. **Ֆինանսական գնահատականներ և ծախսային արդյունավետություն**

Կոմիտեի կայքջում զետեղված աղյուսակում, որպես Կոմիտեի հիմնական ռազմավարական նպատակ է նշվում հանցագործությունների օբեկտիվ և արդյունավետ նախաքննության իրականացումը: Սակայն բյուջետային ծրագրում կատարվելիք հիմնական փոփոխությունների, կապիտալ բնույթի հիմնական միջոցառումների, ֆինանասական ակտիվների կառավարմանն առնչվող միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը լրացված չէ: Կոմիտեի կայքջում զետեղված աղյուսակում, որպես Կոմիտեի հիմնական ռազմավարական նպատակ է նշվում հանցագործությունների օբեկտիվ և արդյունավետ նախաքննության իրականացումը: Սակայն բյուջետային ծրագրում կատարվելիք հիմնական փոփոխությունների, կապիտալ բնույթի հիմնական միջոցառումների, ֆինանասական ակտիվների կառավարմանն առնչվող միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը լրացված չէ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 3.1: Հատկանշական է, որ Կոմիտեի 2019, 2020, 2021, 2022 թվականների ծախսերում ամենաքիչ գումարը հատկացվում է վերապատատրաստումներին և մասնագիտական ուսուցմանը: Կոմիտեի գործունեության որակը բարձրացնելու տեսանկյունից կենսական նշանակություն ունի Կոմտեիում աշխատակազմում աշխատող արհեստավարժ կադրերի առկայությունը: Մինչդեռ Կոմիտեին հատկացրած դրամական միջոցներով անհնար է հասնել այդ նպատակին: Առաջարկում ենք վեր հանել քննիչների՝ կոնկրետ վարույթների իրականացման արդյունքում կատարած մասնագիտական սխալները և թերացումները, կազմել վերապատրաստման դասընթացները պրակտիկ գիտելիքների պակասի և մասնագիտական տիրույթում գտնվող բացերի հիման վրա: